

սէն կը գրէ Հալէպ, Եղիազար Անթապ-  
ցիին. «Չունինք հոգաբարձու, որ զքրիս-  
տոնեայքն հոգայ և զնոցա խիղճն ի միտ  
ածէ, բաց ի հրամանուցէդ» (15):

Քիչ ետք, Յակոբ Զուղայեցի նոր նը-  
ւիրակ մը կը զրկէ Կ. Պոլիս յանձին  
Գաղատիոյ Մինաս Առաջնորդին: որ հա-  
զիւ մէկ քսակ դրամ կրնայ հաւաքել. ա՛յն-  
չափ մեծ էր ժողովուրդին դժգոհութիւնը  
էջմիածնի նուիրակներուն դէմ, որոնք  
խիստ պահանջկոտ էին, և կը կեղեքէին  
կղերն ու հաւատացեալները, բանադրանք-  
ներ ու նզովքներ սպառնալով: Ղազար Վ.  
Կլմպոզ՝ Կ. Պոլսէն գրելով Երուսաղէմ,  
Եղիազար Անթապցիին, կ'ըսէ. «Այսչափ  
խռովութիւնս է ի քաղաքիս, քան զթու-  
մայինն է աւելի. եկեալ նուիրակն (Մինաս)  
բռնի զքաղաքս նուիրակել կամի. . .» (16):  
Այս պատճառաւ, կարգ մը ազգեցիկ մար-  
դիկ կը դիմեն Օսմանեան կառավարու-  
թեան, որպէս զի արգիլէ մուտքը իր  
երկրէն ներս Պարսկահայ նուիրակներու  
(17):

---

(15) Դիւան Ա. Յակոբայ. Սիոն, Նոր  
Շրջան, Զ. Տարի, 1932, Սեպտ. բիւ 9, էջ  
279:

(16) Աճղ, Զ. Տարի, 1932, Ապրիլ, բիւ  
4, էջ 122:

(17) Աճղ. Ազգպ. Բ. 2533: